պայ։ Եւ նամակ թագաւորի և պատգամ ի ձեռս նորա ելանէր ի գուբս, և ունէր մեծ իշխանութիւն ի վերայ ծառայիցն եւ խրոխտ նախ եւ ապա, եւ երկնչէին յոյժ յոյժ եւ ոչ կարէին հայել բնաւ հրէի նուաստի եւ յեռնելոյ, քանզի բազում էր զօրք, եւ գահ թագաւորական այժմ նա լինէր, զի պատաւորք մեծ անդ էին՝ մոլնայն եւ իշխանք եւ նոցին գործակալք, նախարարք եւ սպասաւորք եւ բազումք նստեալ էին ի տուն Յունաց, Հայոց եւ Հրէից եւ Տաճկաց զամենայն օր, և ընտանիքն ձանձրացեալք էին։

Յաւուր միում եէնկիչէրիք բռնի մտեալ ի տուն ումեմն՝ լկել կկինն, որ չէր այր նորա ի տան, և կինն զաղաղակ բարձեալ։ Իմացեալ դրացեաց և բռնաւորաց արանց, զի յանկիւնս քաղաքին եւ յամենայն գլուխս ճանապարհաց պահէին չորպաճիք՝ զօրօք նըստեալ անդէն, և կալեալ զնոսա հանեն ի վէգիրն, և նա սպանանէր զեէնկիչէրին ընկերօքն և ի գետն ընկենոյր։

Եէնկիչէրիք արք ի կալեալ ի ճանապարհի զփառաւոր կին մի Յունաց և վերուցեալ զնա, որ ոտիցն չկոխէր յերկիր, եւ տանէին ի պարտէզն։ Լուեալ զայս արանց քէհայէկին[1]), գունդս զօրաց եղեալ ի վերայ նոցա՝ հասանեն անդ, յաւել քան զի արս կոբուսին ի նոցանէ ի գետն։

Եէնկիչէրիք հում միս դնեն ի փուռ եփել, եւ ասել զտեղին՝ թէ այս նիչ տեղւոջ պարտիզի կամք, յորժամ եփեսցի՝ բերցէ մանուկ փուռունճուն. և յորժամ տանի՝ նոցա առեալ ի մէջ զպատանին խայտառակեալ։ Լուեալ զայս փուռունճոց թէ յամեցաւ, զօրս հասուցանեն ի վերայ նոցա, կալեալ զնոսա [տա]նեն առ [վ]էգիրն. զի արս կորոյս ի նոցունց։

1) քէհայէկն.